ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27.05.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԻԶՎ Ս բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան.
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
ՀՀ ՋՈՒ ԻԶՎ Ս բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյան.
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ի և «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի, որոնց կողմից ներկայացված և ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6-ը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ, «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից Հավելված 6.1-ով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում են մարտկոցի «ՄԱՀ (mah)» չափանիշին վերաբերվող տվյալները: Ուստի 29.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակիցներին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունը, և 03.06.2019թ. նիստը շարունակվեց:

Քանի որ 24.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 03.06.2019թ., հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչ, գնահատող հանձնաժողովի անդամ Յու. Եսայանի կողմից 03.06.2019թ. տրված մասնագիտական եզրակացությունը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրերի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Կարապետյան

Գնահատող Յու. Եսայան

Գնահատող Տ. Գասպարյան

Գնահատող Ա. Մուրադյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան